ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՉԱՓՈՐՈՇՉԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

ՎԼԱԴԻՄԻՐ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ,

Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան

էլ. հասցե՝ *vskarapetyan@mail.ru*

ԱԼԼԱ ԴԱԼԼԱՔՅԱՆ,

Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան

էլ. հասցե՝ *alla.dallakyan@gmail.com*

ՄԱՐԻԱՆՆԱ ԱՄԻՐԱՂՅԱՆ,

Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան

էլ. հասցե՝ *amiraghyan.80@mail.ru*

DOI: 10.24234/scientific.v1i44.44

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում քննարկվում են նախադպրոցական կրթության բարեփոխմանը միտված կարողունակահեն մոդելի առանձնահատկությունները, որոնց համատեքստում հիմնավորվում է նախադպրոցականի կոմպետենտային զարգացման դերը շարունակական կրթության արդյունավետ ապահովման գործում: Այստեղից էլ, նկարագրված են նախադպրոցականի հենքային կարողունակությունները, որոնք, ըստ էության, ձեռք բերված գիտելիքի, հմտությունների, արժեքների և դիրքորոշումների հիման վրա, ըստ իրավիճակի, արդյունավետ ու պատշաճ արձագանքելու ձևեր են: Հետևապես, կարևորվում է գիտելիքով ամրագրված նախադպրոցականի կարողության ձևավորումը, ինչն աստիճանաբար նպաստում է դիրքորոշումների և արժեհամակարգի ձեռքբերմանը: Ներկայացված են նաև 21-րդ դարի հիմնարար կոմպետենցիաները, որոնք համադրված են ՀՀ նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչով նախատեսված կարողունակություններին: Ուսումնասիրության

արդյունքում մշակված է նախադպրոցականի կարողունակությունների դրսևորմանն ուղղված մանկավարժական գործընթացի քայլաշար, որի հիմքում զարգացման ոլորտների միավորումն է և խաչվող կրթական վերջնարդյունքների, այն է՝ կարողությունների առանձնացումը: Միավորվող զարգացման ոլորտների խաչվող կրթական վերջնարդյունքների ձևավորման գործընթացը նպաստում է ճանաչելու, գործելու և միասին ապրելու կարողունակությունների դրսևորումներին: Քննարկված է նաև ոչ միայն դաստիարակի, այլ նաև երեխայի կողմից սեփական կարողունակությունների գնահատման հարցը, որի արդյունքում ձևավորվում են նաև ինքնագնահատման կարողություններ, որոնք երեխային օգնում են հասկանալ և օբյեկտիվ վերլուծել սեփական ձեռքբերումները:

Բանալի բառեր՝ նախադպրոցական կրթության չափորոշիչ, կարողունակություն, կարողություն, կրթական վերջնարդյունք:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Վերջին տարիներին կատարված բազմաթիվ միջազգային ուսումնասիրությունները համոզիչ կերպով հաստատում են նախադպրոցական կրթության ոլորտում ֆինանսական ներդրումների կարևորությունը պետության հզորացման գործում՝ նախադպրոցական մանկության շրջանը համարելով յուրահատուկ սոցիալ-մշակութային երևույթ, որի բովանդակային հարստացումը կանխորոշում է մարդու որակական ինքնատիպությունը նրա ողջ կյանքում: Նախադպրոցական կրթությունը զարգացման մղող ցատկահարթակ է. այն սահմանում է կյանքի հետագա ընթացքն առաջին հայացքից անտեսանելի մանրուքներով (Ibuka M., 2010; Фельдштейн Д., 2011; Вознюк А., 2012):

Նախադպրոցական կրթության որակի բարելավումը Հայաստանի Հանրապետության կրթական քաղաքականության առանցքային խնդիրներից է: Այս ուղղությամբ իրականացվող աշխատանքը միտված է որակյալ կրթության հստակ չափանիշների առանձնացմանն ու դրանց շարունակական զարգացմանը: Հասարակության զարգացման ժամանակակից պայմաններում անորոշության, անկայունության, քաոսային զարգացման դրդող փոփոխություններն ու ճգնաժամերը, ըստ Ի.Դ. Ֆելդշտեյնի (Фельдштейн Д., 2011), ենթադրում են բոլորովին նոր մտածելակերպի, դիրքորոշումների և անձնային հատկությունների

ձևավորում, որոնք վաղվա քաղաքացուն կօգնեն հաղթահարելու բազմաթիվ դժվարություններ: Պատահական չէ, որ այսօրվա կրթությունը՝ նախադպրոցական տարիքից սկսած, կարևորում է տարբեր խնդրահարույց իրադրություններում գործելու անձի կարողունակությունները: Կարողունակությունների վրա հիմնված կրթության մոդելը կենտրոնացած է ոչ թե սովորած տեղեկատվության քանակի, այլ կրթության արդյունքի վրա: Նախադպրոցական տարիքի երեխայի զարգացման վերջնարդյունքները նույնպես գնահատվում են կարողունակություններով, որոնք կոչված են ապահովելու նրա հաջող մուտքը հասարակություն, դպրոցական կյանք և կրթական գործընթացին հաղորդելու անձնային պատասխանատվություն (Гриневич И., Чуприна А., et al, 2018) :

Նախադպրոցականի կրթական վերջնարդյունքները չափվում են նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչում ներկայացված կարողունակություններով:

ՀՀ նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչը (*Նախադպրոցական կրթության չափորոշիչ,* 2021) հանրակրթության պետական կրթական չափորոշչի մաս կազմող նորմատիվ իրավական ակտ է, որը սահմանում է.

- նախադպրոցական տարիքի երեխաների (ըստ տարիքային խմբերի) զարգացմանն ուղղված կրթական ծրագրերի բովանդակությունը,
- կրթական վերջնարդյունքներն ըստ զարգացման ոլորտների և դրանց ներկայացվող պահանջները,
- ուսումնական բեռնվածության առավելագույն ծավալը,
- նախադպրոցական տարիքի երեխաների կրթության և զարգացման վերջնարդյունքի ապահովման հիմքերը:

Չափորոշիչը ներառում է՝

1) ուսումնադաստիարակչական հիմնական բնագավառները, կրթական ծրագրի բաղադրիչները և դրանց սահմանման մանկավարժահոգեբանական սկզբունքները,

2) երեխաների ուսումնական, խաղային բեռնվածության առավելագույն չափը կամ դրանց հարաբերակցությունը,

3) երեխաների զարգացման ընթացքի և առաջադիմության մակարդակի դիտարկման ձևերը,

4) նախադպրոցական ուսումնական հաստատություններում ներառական և երեխայակենտրոն միջավայրի չափանիշները, որոնք հաստատում է կրթության պետական կառավարման լիազորված մարմինը,

5) նախադպրոցական ուսումնական հաստատություններում երեխայի անվտանգ միջավայրի և աղետներին պատրաստվածության չափանիշները:

Կարողունակությունները նախադպրոցական տարիքի երեխաների կողմից ուսումնառության և դաստիարակության գործընթացում ձեռք բերված գիտելիքի, հմտությունների, արժեքների և դիրքորոշումների հիման վրա ըստ իրավիճակի արդյունավետ ու պատշաճ արձագանքելու ձևեր են: Նախադպրոցական տարիքի երեխաների կարողունակությունները ձևավորվում են ուսուցման և դաստիարակության կազմակերպման միջոցով:

Չափորոշչով սահմանված կարողունակությունները նկարագրում են, թե ինչ պիտի իմանա, կարողանա անել և հասկանա վեց տարեկան երեխան: Ըստ էության, չափորոշչային վերջնարդյունքներն ուղղված են կարողունակությունների ձևավորմանը: Նախադպրոցական կրթության կարողունակություններն են՝ 1)լեզվական և հաղորդակցական, 2)ճանաչողական և մոտիվացիոն, 3)ինքնաճանաչողական և սոցիալական, 4)ժողովրդավարական և քաղաքացիական, 5)թվային և մեդիա, 6)մշակութային, 7)մաթեմատիկական և տեխնիկական, 8)տնտեսական, 9)ֆիզիկական կուլտուրայի (*Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչ*, 2021):

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Կրթության կարողունակահեն մոդելի հիմքում ՅՈՒՆԵՍԿՕ-ի հանձնարարությամբ ֆրանսիացի քաղաքական գործիչ Ժակ Դելորի (‘*Образование: сокрытое сокровище’*, 1996) կողմից առանձնացված XXI դարի կրթության թվով չորս հիմնարար կոմպետենցիաներն են, որոնք կոչված են ապահովելու ցանկալի արդյունքներ երրորդ հազարամյակում: Դրանք են.

- ✓ սովորել գործել,
- ✓ սովորել ապրել միասին,

- ✓ սովորել ճանաչել,
- ✓ սովորել ապրել:

21-րդ դարի կրթության որակը գնահատող նշված չորս հիմնարար կարողունակությունները վերանայման են ենթարկում կրթական ողջ գործընթացի նպատակն ու վերջնարդյունքները՝ նախադպրոցական տարիքից սկսած:

Այսպիսով, նախադպրոցական տարիքից ձևավորվող ճանաչելու, գործելու և միասին ապրելու կարողունակությունները բազմագործառութային և ինտեգրատիվ անձնային հատկություններ են, որոնք բնութագրում են խնդրահարույց իրադրություններում տարաբնույթ խնդիրներ լուծելու երեխայի կարողությունները: Դրանք հնարավորություն են տալիս հարմարվելու փոփոխվող սոցիալական միջավայրի պայմաններին՝ զարգացմանը փոխանցելով անհատական ուղղվածություն:

Համաձայն ՀՀ հանրակրթության չափորոշչի՝ կարողունակության բաղադրիչներն են՝ գիտելիքն ու կարողությունը, արժեհամակարգն ու վերաբերմունքը (դիրքորոշումը) (*Հանրակրթության չափորոշիչ,* 2021): Հաշվի առնելով նախադպրոցական կրթության առանձնահատկությունները՝ կարողունակության բաղադրիչներից օրինաչափորեն առանձնացվում է առանցքային մեկ բաղադրիչ, որի շուրջ և կառուցվում է չափորոշչահեն մանկավարժական գործընթացը: Այդ բաղադրիչը գիտելիքով ամրագրված կարողությունն է, որի ձևավորմանն ուղղված շարունակական աշխատանքն աստիճանաբար կնպաստի դիրքորոշումների և արժեհամակարգի ձեռքբերմանը: Մեր խորին համոզմամբ, կարողունակության դրսևորումները կարող են արձանագրվել միայն բազմաշերտ կարողությունների ձևավորման արդյունքում: Փորձենք հիմնավորել վերոնշյալը հետևյալ դրույթներով.

1. կրթական վերջնարդյունքները կարողություններ են, այսինքն՝ կրթական վերջարդյունքները գնահատվում են երեխայի կարողություններով:

2. Կրթական վերջարդյունքներն արտացոլում են երեխայի գործողությունների տրամաբանությունը: Կրթական վերջարդյունքներն արտացոլում են երեխայի գործունեության հաջողությունը նաև սոցիալ-մշակության ոլորտում և հարաբերություններում, հետևաբար ցույց են տալիս նրա սոցիալականացման

աստիճանը:

3. Կարողություններն են բնորոշում ձևավորվող անձնավորության ինքնությունը: Հետևաբար, արտաքին աշխարհին արձագանքելու կարողությունները նպաստում են որոշակի դիրքորոշումների և արժեքների ձեռքբերմանը:

Այսինքն՝ կրթական վերջնարդյունքը ձևավորում է կարողունակություն, եթե երեխայի ոլորտային զարգացման ձեռքբերումները դրսևորվում են նպատակային գործողություններով: Կարողունակությունը տարաբնույթ կարողությունների համակարգ է: Նախադպրոցականի կարողունակությունների ծավալուն նկարագրերը հստակ պատկերացնելու և այդ ուղղությամբ իրականացվող մանկավարժական աշխատանքն արդյունավետ կազմակերպելու նպատակով, կարելի է թվով ինը կարողունակությունը պայմանականորեն բաժանել երեք խմբի՝ հիմք ընդունելով Ժակ Դելորի կրթության կազմակերպման հիմնարար սկզբունքները և 21-րդ դարում առավել կարևորվող հենքային կոմպետենցիաները: Այսպես, օրինակ, **ճանաչելու** կարողունակությունը արդյունք է լեզվական և հաղորդակցական, ճանաչողական և մոտիվացիոն և ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակությունների: **Գործելու** կարողունակությունը ձևավորվում է ֆիզիկական կուլտուրայի, մաթեմատիկական և տեխնիկական, թվային և մեդիա կարողունակությունների համատեղ ձևավորման արդյունքում: **Միասին ապրելու** կարողունակությունը ժողովրդավարական և քաղաքացիական, մշակութային և տնտեսական կարողունակությունների համադրություն է:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Կարողունակությունների ձևավորման մեթոդաբանությունը ենթադրում է մանկավարժական գործընթացի կազմակերպման որոշակի քայլաշար (Зимняя И., 2009):

Առաջին քայլը կարողունակությունների խմբավորումն է՝ յուրաքանչյուր խմբի համար մեկ ընդհանրական դրսևորման ընտրությամբ: Երկրորդ քայլը՝ զարգացման ոլորտների միավորումն է՝ խաչվող վերջնարդյունքների ընտրությամբ: Երրորդ քայլը՝ մանկավարժական գործընթացի նպատակի և վերջնարդյունքի սահմանումն է: Չորրորդ քայլը՝ մանկավարժական գործընթացի կազմակերպման արդյունավետ գործիքների ընտրությունն է: Հինգերորդ քայլը՝ վերջնարդյունքների գնահատումը:

Քայլերը ներկայացված են գծապատկերում:



Քայլ 1.Կարողունակությունների **1-ին խմբի** ընդհանրական դրսևորումներն են.

✓ երեխան դրսևորում է ճանաչողական հետաքրքրություն աշխարհի, առարկաների և երևույթների հանդեպ, ակտիվ ներգրավվում է գործունեության տարբեր ձևերի, մտավոր տարբեր գործողությունների, նոր բացահայտումների մեջ, այսինքն՝ սիրում է բացահայտել աշխարհը,

✓ երեխան ունի վստահություն սեփական կարողությունների հանդեպ, դրսևորում է ինքնուրույնություն և ինքնակազմակերպվելու հմտություններ, այսինքն՝ ճանաչում է իր ԵՍ-ը:

2-րդ խմբի՝ գործելու կարողունակությունների ընդհանրական դրսևորումներն են.

✓ երեխան դրսևորում է անհրաժեշտ ֆիզիկական պատրաստվածություն և բարոյակամային հատկություններ՝ ինքնուրույնություն, կարգապահություն, կամք, պատասխանատվություն, համագործակցություն, վճռականություն, փոխօգնություն, ընկերասիրություն, նախաձեռնողականություն, պահպանում է առողջ ապրելակերպի կանոնները,

✓ հետազոտում է առարկաները և երևույթները, գտնում է տարբեր խնդիրների լուծումներ,

✓ կարողանում է օգտվել մեդիա տարրական գործիքներից, դրսևորում է առարկաների, երևույթների մոդելավորման կարողություններ, տարբերում է իրական և վիրտուալ աշխարհները:

3-րդ խմբի՝ միասին ապրելու կարողունակությունների ընդհանրական դրսևորումներն են.

✓ տիրապետում է բարեվարքության և սոցիալական արդարության պարզագույն կանոններին, համագործակցում է հասակակիցների հետ,

✓ կարողանում է գնահատել գեղեցիկը, դրսևորում է հետաքրքրություն գեղարվեստական գործունեության հանդեպ;

✓ ունի պարզագույն տնտեսագիտական պատկերացումներ, հասկանում է յուրաքանչյուրի դերը շրջակա միջավայրի պահպանման գործում, ակտիվ մասնակցում է այդ գործընթացին:

Քայլ 2. Զարգացման ոլորտների միավորման տարբերակներ.

- խոսքի և հաղորդակցության + իմացական ոլորտները,
- իմացական + հուզական, սոցիալ-անձնային ոլորտները,
- շարժողական + ինքնասպասարկման, անվտանգության, առողջ ապրելակերպի ոլորտները:

Շարժողական + ինքնասպասարկման, անվտանգության, առողջ ապրելակերպի ոլորտների միավորման ԽԱՉՎՈՂ վերջնարդյունքներն են.

✓ երեխան ունի պատկերացումներ օրգանիզմի վրա ֆիզիկական վարժությունների և սպորտի դրական ներգործության մասին,

✓ դրսևորում է ֆիզիկական ակտիվություն,

✓ ներկայացնում է առողջության և կյանքի համար հնարավոր վտանգները, դրանց հաղթահարման ուղիներն ու միջոցները:

Նշված վերջնարդյունքները ձևավորում են ֆիզիկական պատրաստվածության, առողջ ապրելակերպի կանոնները պահպանելու կարողունակություն:

Քայլ 3. Նպատակը և վերջնարդյունքները սահմանելու համար անհրաժեշտ է

միավորել զարգացման երկու կամ երեք ոլորտ և ընտրել խաչվող առնվազն երկու վերջնարդյունք: Օրինակը ներկայացված է գծապատկերում:



Քայլ 4. Մանկավարժական գործընթացի կազմակերպումը ենթադրում է .

1.մանկան գործունեության ձևերի ընտրություն,

2. երեխաների ձեռքբերումների գնահատման չափանիշների հստակեցում,

3. երեխաների ձեռքբերումների ցուցիչների (նպատակային գործողություններ, արտաքին դրսևորումներ) առանձնացում,

4. մանկավարժական գործընթացի գործիքակազմի ընտրություն (խաղեր, խաղային տեխնոլոգիաներ, փոխգործուն մեթոդներ, կազմակերպման ձևեր, միջոցներ),

5. կրթական վերջնարդյունքի կամ երեխաների կարողությունների գնահատման սանդղակի մշակում:

Մանկավարժական գործընթացի կազմակերպման ընթացքը միտված է ապահովելու նախատեսվող կրթական վերջնարդյունքները:

ՔԱՅԼ 5. Կրթական վերջարդյունքի գնահատում կամ սեփական ձեռքբերումների ինքնագնահատում:

Նախադպրոցական կրթության համակարգում ըստ նպատակի առանձնացվում է գնահատման երեք տեսակ. նախնական (հայտորոշիչ), ընթացիկ

(ձևավորող) և ամփոփիչ (բնութագրող): Կրթական վերջարդյունքի գահատման նշված տեսակները հիմնականում վերաբերում են դաստիարակին: Իրականում, վերջնարդյունքը համարվում է արձանագրված միայն այն դեպքում, երբ երեխան ինքն է կարողանում բարձրաձայնել իր կարողություններն ու կարողունակությունները: Առհասարակ, ԽԻԿ համակարգում առանձնահատուկ կարևորվում է կշռադատման, այն է՝ ռեֆլեքսիայի փուլը, որի ընթացքում են ձեռք բերվում դիրքորոշումներ քննարկվող թեմայի շուրջ, բացի այդ, ձևավորվում են ինքնագնահատման կարողություններ, որոնք երեխային օգնում են հասկանալ և օբյեկտիվ վերլուծել սեփական հաջողություններն ու անհաջողությունները:

Կշռադատման փուլում կիրառվող մեթոդներն ու հնարները բազմաթիվ են, դրանցից են՝ «Ճիշտ և սխալ դատողություններ», «Հարցադրումներ», «Սինկվեյն» և այլն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, նախադպրոցական կրթության կարողունակահեն մոդելը պահանջում է մանկավարժական գործընթացի կազմակերպման նպատակային քայլեր, որոնք կնպաստեն նախադպրոցականի կարողունակությունների դրսևորումներին՝ զարգացման և կրթական վերջարդյունքների ձևավորման միջոցով: Նախադպրոցականի կարողունակությունների դրսևորումներն ի հայտ են գալիս զարգացման ոլորտների միավորման և ընտրված ոլորտների խաչվող կրթական վերջնարդյունքների արձանագրման արդյունքում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչ. (2021). *Http://Www.Arlis.Am/DocumentView.Aspx?DocID=152575.*

Հանրակրթության պետական կրթական չափորոշիչ. (2021). *Https://Www.Arlis.Am/Documentview.Aspx?Docid=149788.*

Вознюк А. В., (2012). *Педагогическая синергетика.* Житомир: Изд-во ЖГУ им. И. Франко.

Гриневич И.М., Чуприна А.А., Тоторкулова М.А., Москвитина Н.Ю., Гриневич Г.В., Матяжова О.А., (2018). *Компетентностная модель дошкольного образования.* Ставрополь: СКИРО ПК и ПРО.

Зимняя И.А., (2009). Ключевые компетенции – новая парадигма результатов образования. *Эксперимент И Инновации В Школе*, *2*, 7–17.

Образование: сокрытое сокровище: Основные положения Доклада Международной комиссии по образованию для XXI века. ЮНЕСКО (1996). *Https://Www.Gcedclearinghouse.Org/Ru/Resources*

Фельдштейн, Д. И. (2011). *Глубинные изменения детства и актуализация психолого-педагогическихпроблем развития образования.* СПб. : СПбГУП.

Masaru Ibuka. (2010). *Kindergarden is too late.* University of Virginia.

REFERENCE LIST

Gosudarstvennyj obrazovatel'nyj standart doshkol'nogo obrazovaniya *(State educational standard of preschool education).* (2021). *Http://Www.Arlis.Am/DocumentView.Aspx?DocID=152575*.

Gosudarstvennyj obrazovatel'nyj standart obshchego obrazovaniya *(State educational standard of general education).* (2021). *Https://Www.Arlis.Am/Documentview.Aspx?Docid=149788*.

Voznyuk A. V., (2012). Pedagogicheskaya sinergetika *(Pedagogical Synergetics)* ZHitomir: Izd-vo ZHGU im. I. Franko.

Zimnyaya I.A., (2009). Klyuchevye kompetencii *(Key competencies)* novaya paradigma rezul'tatov obrazovaniya. Eksperiment I Innovacii V SHkole, 2, 7–17.

Grinevich I.M., CHuprina A.A., Totorkulova M.A., Moskvitina N.YU., Grinevich G.V., Matyazhova O.A. (2018). Kompetentnostnaya model' doshkol'nogo obrazovaniya *(Competence model of preschool education),* Stavropol': SKIRO PK i PRO.

Obrazovanie: sokrytoe sokrovishche: *(Education: a hidden treasure)* Osnovnye polozheniya Doklada Mezhdunarodnoj komissii po obrazovaniyu dlya XXI veka. ЮНЕСКО (1996). *Https://Www.Gcedclearinghouse.Org/Ru/Resources*

Fel'dshtejn, D. I., (2011). Glubinnye izmeneniya detstva i aktualizaciya psihologo-pedagogicheskihproblem razvitiya obrazovaniya *(Profound changes in childhood and actualization of psychological and pedagogical problems of education development).* SPb. : SPbGUP.

Masaru Ibuka. (2010). *Kindergarden is too late.* University of Virginia.

РЕЗЮМЕ

ТРЕБОВАНИЯ ГОСУДАРСТВЕННОГО ОБРАЗОВАТЕЛЬНОГО СТАНДАРТА ДОШКОЛЬНОГО ОБРАЗОВАНИЯ РА

ВЛАДИМИР КАРАПЕТЯН, АЛЛА ДАЛЛАКЯН, МАРИАННА АМИРАГЯН

В статье представлены преимущества компетентностной модели дошкольного образования, обоснована роль формирования компетенций дошкольников в обеспечении эффективности непрерывного образования, описаны базовые компетенции и способствующие их проявлениям методические особенности организации педагогического процесса. Поэтому важно развивать закрепленную знаниями способность дошкольника, которая способствует приобретению установок и ценностей. Также представлены фундаментальные компетенции 21 века, которые сочетаются с компетенциями, предусмотренными дошкольным образовательным стандартом. Разработана пошаговая последовательность педагогического процесса, в основе которого лежит объединение сфер развития детей дошкольного возраста с

последующим выбором скрещивающихся образовательных результатов. Процесс формирования скрещивающихся образовательных результатов, выбранных в результате объединенных сфер развития, стимулирует проявления компетенций познания, деятельности и умения жить вместе. Также рассматривается оценка ребенком собственных компетенций, в результате которой формируются способности самооценки, помогающие ребенку понять и объективно проанализировать свои достижения.

Ключевые слова: стандарт дошкольного образования, умение, компетенция, образовательный результат.

ABSTRACT

REQUIREMENTS OF THE STATE EDUCATIONAL STANDARD FOR PRESCHOOL EDUCATION OF THE RA

VLADIMIR KARAPETYAN, ALLA DALLAKYAN, MARIANNA AMIRAGYAN

The article discusses the peculiarities of a competence-based model aimed at improving preschool education, in the context of which the role of a preschooler's competent development is justified. Hence, a preschooler's basic competences are described, which are forms of effective and appropriate response based on the acquired knowledge, skills, values and attitudes. Therefore, a preschooler's ability, fixed by knowledge, is important to develop which contributes to the acquisition of attitudes and values. The fundamental competencies of the 21st century are also presented, which are combined with the competences provided by the preschool educational standard. As a result of the study, a sequence of steps of the pedagogical process aimed at the manifestation of a preschooler's competences was developed, the basis of which is the unification of the areas of development and the separation of joint educational outcomes - separation of abilities. The process of formation of joint educational outcomes of the converging areas of development contributes to the manifestations of the abilities to recognize, act and live together. The assessment of own competences by a child is also discussed, as a result of which abilities of self-evaluation are formed, which help a child

to understand and objectively analyze own achievements.

Key words: state standard of preschool education, competence, ability, educational outcome.

Հոդվածը ստացվել է՝ 17.01.2023թ.

Հոդվածն ուղարկվել է գրախոսման՝ 18.01.2023թ.

Հոդվածը երաշխավորվել է հրատարակման՝ 03.03.2023թ.